ՀՀԿԽ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

17 մարտ, 2023 թվականի № 24-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով, 84-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրությամբ, հիմք ընդունելով Ընկերության գործադիր տնօրենի 2023 թվականի մարտի 14-ի N Հ.Մ./02-68/23 գրությունը և հաշվի առնելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2023 թվականի փետրվարի 10-ի № 12-Լ որոշման համաձայն կատարված գնահատման արդյունքում անկախ գնահատողի («Ակսոն» ապրանքա-հումքային բորսա) կողմից ներկայացված Ընկերության գույքի շուկայական արժեքի գնահատման 2023 թվականի մարտի 10-ի № 23/03 հաշվետվությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերությանը պատկանող «Չերի Կովին» մակնիշի 2006 թվականի արտադրության տրանսպորտային միջոցի (նույնացման համարը՝ LVVDA11B06D173822) շուկայական արժեքը սահմանել 202000 (երկու հարյուր երկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

17 մարտ, 2023 թվականի

ք. Երևան